Վարպետ

Ժառանգներ

ՀՈՒՍԱՀԱՏ Ը

Ը

Արդեն ժամանակն անցել էր, շտապեցին, հագցրին թագավորներին և հարսներին, ճանապարհ ընկան եկեղեցի: Մեծ թափոր էր գնում նրանց հետ: Թեմրանի երիտասարդները, Արտաշի ու Ավագի ընկերակիցները զինված պտտվում էին հարսնևորների շուրջը, տաբանջաներն էին կրակում, դարաբինաները դատարկում:

Մամո բեգի քուրդ լրտեսները, անցածի ու դարձածի մասին մանրամասն ամեն լուր հասցնում էին: Վարդապետի գալը կատաղեցրել էր նրանց, Փրթոն մանավանդ անձի միսն էր ուտում, այս ու այն կողմը հրամաններ էր արձակում:

Իսկ հարսնևորները երգելով, պարելով, ծանր քայլերով առաջնորդում էին հարսներին ու թագավորներին դեպի եկեղեցի: Դեռ երիտասարդներից շատերը կանգնեցնում էին տեղ-տեղ թափորը և դհոլի, զուռնի ածած եղանակներով հարսաղջիկների հետ կաքավում, ամուսնացողների պատվի համար: Հասակավորները բոլորվում էին պարող երիտասարդների հունարը տեսնելու համար: Ժողովուրդը կիսված էր, ծերունիները դեռ շարունակում էին հարսնետանը իրենց կերուխումը, իսկ երիտասարդները չէին ուզում անգամ հեռացնել իրենց հայացքները բախտավոր ամոլների վրայից:

Հասան եկեղեցի, վարդապետը կատարեց պսակը, և հարսնևորները ավելի ուրախ, սիրահարների թագերն ու պսակները տեսնելուն արժանացած, ավելի շատ տրամադրված, ավելի մեծ աղմուկով դուրս եկան եկեղեցու բակից:

Կրկին սկսեցին պարերն ու պարերգերը, կրկին դղրդացրեց գյուղը տաբանջաների ու դարաբինաների որոտումները, որը ավելի սարսափ էր ձգում Մամո բեգի սրտում, կեցցեներն ու հուռաները թնդացնում էին օդը:. Կամաց-կամաց առաջ էր գնում հարսնևորների թափորը և ամեն քայլափոխին մի քանի երիտասարդներ ուտելիք, խմելիք և քաղցրեղեն էին բաժանում հանդիսականներին :

Թափորը դեռ չհասած Ամիրխանենց դռանը, հանկարծ Փրթոն յուր ձիավորների խմբով հարձակվեց հարսնևորների վրա, ճեղքեց հարս-աղջիկների դասը (մի քանի գնդակներ արձակեցին այնալու հրացաններից, շփոթություն տարածելով, ոտնատակ տալով մի քանի աղջիկների), վրա հասավ, մոտեցավ Արտաշեսին և սրով մի քանի թեթև հարված տալով անգեն թագավորին, խլեց, քաշեց, թարքն արավ Անահիտին, որն այդ ժամանակ փաթաթված էր Արտաշեսի վզովը, և հեռացան: Մինչ այդ, Փրթոյի հրոսակները երեք աղջիկ էլ քաշել էին իրենց ձիաների գավակը և շրջապատվելով հիսուն-վաթսուն ձիավորով, հեռացել սրընթաց արաշավանքով: Այդ միջոցին երիտասարդներն առանց շփոթվելու բոլորել էին Աննմանին ու Ավագին և նրանց պաշտպանել, գիտենալով, որ թշնամու հարձակումը միայն նրա համար էր: Փրթոն կարծում էր, որ Արտաշեսի հետ գնացողը և նրան փաթաթվողը Աննմանն էր, այդ իսկ պատճառով նրա վրա էր հարձակվել: Հարսանեկան թանձր քողի տակ խո չէ՞ր կարող զանազանել Անահիտին Աննմանից: Մինչև ձիավորները շարժվեցին, ձիավորվեցին, արդեն ավարառուները բավական հեռացել էին գյուղից:

Թ

Մինչև Թեմրանցի երիտասարդների Փրթոյի խմբի ետևից հասնիլը սրանք կռվի էին բռնվել վարդապետի ձիավորների հետ և երկու կողմից արձակած հրացանների ձայնը հասնում էր Թեմրան: Մինչև թեմրանցիների հասնիլը, Փրթոյի խումբը, արդեն քսանի չափ զոհ տալով, ետ էր փախչում: Թեմրանցիք չկարողացան Փրթոյի խմբի կատաղի երիվարների անապարհը կտրել, նրանք

սարշավ դիմեցին Մամո բեգի ապարանքը: Թեև հետևեցին թեմրանցիք սրանց և ճանապարհին քսանի չափ զոհ ևս ընկան, բայց Փրթոն հաջողությամբ ազատվեցավ, մտավ Մամոյի ապարանքը, ներս տանելով Անահիտին և երեք առևանգած աղջիկներին:

Կատաղել, առյուծ էր դարձել Արտաշեսը, չէին զսպվում առևանգված աղջիկների նշանածներն ու եղբայրները: Ձիավորների խումբը եկավ, պաշարեց Մամոյի ապարանքը և գոռում-գոչումով իր հարազատներին պահանջեց: Մամոն հրամայեց ներսից հրացաններով պատասխանել հարսնևորներին: Հրացաններով էլ հարսնևորները նրանց պատասխանեցին, բայց Մամոյի սպասավորների հրացանները տապալում էին հարսնևորներին, իսկ վերջիններիս հրացանները փշրում էին միայն ապարանքի լուսամուտների ապակիները:

Մի խումբ տղերք Արտաշեսի հետ բահերով, գերաններով աշխատում էին փշրել ապարանքի դուռը, բայց Քյալաշ քեհյան այնպես պինդ էր շինել տվել, որ հեշտ չէր ջարդել: Կես ժամ չանցած ողջ գյուղը հավաքվել էր ապարանքի շուրջը, մեծ աղմուկով, մեծ իրարանցումով դղրդացնում էին ապարանքը: Մամոն, երկյուղից ապարանքի խորքերը քաշված, հրամայում էր գնդակներ տեղացնելով, կոտորել գյավուրներին: Այդ միջոցին ժողովուրդը կատաղած գոռում էր. «Այրե՛լ սարայը», և սկսեցին, որքան որ հին դարման, խոտ կար գյուղում, հավաքել, բերել դիզել ապարանքի շուրջը: Ամենից առաջ Մամո բեգի խոտերին կրակ տվին, հետո մյուսներին, այնպես որ քիչ ժամանակից ամբողջ ապարանքը շրջապատեց ծուխն ու բոցը, և կրակը կպավ շինության ներքին մասին:

Ապարանքը լողում էր բոցերի մեջ: Կանանոցի մեջ ընկել էր վայնասունը: Ձիերը խրխնջում էին իրենց ախոռում, գետինը դոփելով: Արտաշեսը անընդհատ, մի քանի ընկերներով, աշխատում էր կոտորել դռները, բայց չէր հաջողում: Հանկարծ քսանի չափ երիտասարդ քրդեր ներսից դռները բացին և այնպուն ձեռքերում կրակելով դուրս եկան: Հենց առաջին հարվածով մի գնդակ հասցրեց Փրթոն Արտաշեսին, որն արդեն առաջուց սրի վերքերից արյունաքամ եղած և սաստիկ հոգնած լինելով, իսկույն ընկավ, գլորվեց թափկլտելով: Անմիջապես մի գնդակով Ավագն էլ գլորեց Փրթոյին, որը նույնպես տեղն ու տեղը թավալվեց: Դրանից ավելի կատաղեցին տղերքը և վրա հասնելով կտոր-կտոր արին

քրդերին, ձեռքերից խլեցին զենքերը և մտան Մամո բեգի ապարանքը:

Կրակն արդեն ամեն կողմ տարածվել էր, կանանոցում թշվառ հարճերից շատերը խեղդվել էին: Փրթոն դուրս գալուց առաջ տեսնելով, որ սխալված է եղել, Աննմանի փոխարեն Անահիտին է փախցրել, կատաղությունից սպանել էր թե՛ թշվառ կույսին և թե՛ հորը՝ Մամոյին, ու պատահած հարճերին: Ապարանքի բոցերի մեջ մտնող ամբոխն սկսեց ավերել Մամոյի կայքը, ազատել թշվառ հարճերին գերությունից, քանդել արդեն բոցերի մեջ կոլոլված դղյակը:

Արդեն արշալույսը շողշողում Էր արևելքում, խավարն ու աղջամուղջը հետզհետե տեղի Էին տալիս լույսին, կործանվել Էր Մամոյի ապարանքը, և դադարել Էին սոսկալի բոցերը, մոխրակույտը թողնելով իրենց հետքից, երբ ներքին բանտից դողդողալով դուրս եկավ Անթառամը և որդու դիակի շուրջը խռնված ամբոխի մեջ մտնելով, փռվեց Արտաշեսի մարմնի վրա, հեկեկաց, համբուրեց ու մրմնջաց .

Դու քավեցիր հորդ մեղքը քու կյանքովը, որդի՛, դու ազատեցիր ինձ և քու սիրելի քրոջը անօրեն Մամոյի ճիրաններից: Ես քու մահը չեմ սգալու, այլ պիտի թաղեմ կրծքիս մեջ սրտիս կսկիծը ու պիտի գնամ ալ ու կանաչ հագնիմ, որպեսզի ինձ տեսնեն ու քեզ նման որդիք շատ ծնեն հայ մայրերը:

1898 թ .